



ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

Քարոյահան, Քահառիւրահան

Տնտեսահան եւ Քնահան

ԳԻՏԵԼԵԱՑ

Է. ՏԱՐԻ. ԹԻԻ 1.

1849

ՅՈՒՆՈՒԱՐԻ 1.

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՁԱՅՆ ՀԵՉԵՍՑԻ

Ի ՍՐՏԱՀԱՐ սառամանեաց ըզձեզ կարդամ՝ աշխոյժք ջերոտք,
 Ի նմահութեան է 'ի ձեզ սիւգ, օն 'ի բազմոցս պատգամաց
 Խանդավառեալ ձերոց ձայնից՝ վերապարել յիս դարձարուք
 Օ ընդոյրըն մոռացից զհետ շարժելով շունչ հեզագնաց,
 Քնարասաստ բախմամբ զալիս նստուցանել մղձկուտ սրտից
 Յուզելոց 'ի կրից բերմանց և ժանտաժուտ ժամանակաց:
 Ըամանորն և յեռածիր ԲԱԶՄԱՎԷՊ նոր ասպարիզեալ
 Ի քոնավար ավենական քան առիսեան պարող թնդից,
 Թէպէտ և ծաղր ըզհամօրէն արձակելով դղորդմամբք երկրի
 Ի շկահիւնս հանուրց զինուց հակամարտից գնայցէ անահ,
 ԼՂԼ զըզձական ծրդիս հարեալ զհամբուրասէրն հաշտութեան
 Հարիւրթերթի շրթամբք ըզնոյն մաղթէ 'նդհանուրս իաղաղութիւն

() ուարթագին ականողացին կառուցմունս հեղայածիկ ,
 լ) Էպէտ և ցօղս ինչ աղուականս կայլակեսցեն թարթից քնքշանք ,
 Ո՛հ , գըթուծիւն տէր , գըթուծիւն այց արասցէ մահկանացուաց ,
 Բանդագուշեալք են , աղմրկեալք , անգիտացեալք և կարճամիտք ,
 Խեռք և ստահակք և խակագործք . այլ են որդիք , զքեզ գիտեն հայր ,
 հայր՝ առաջին անուն է քեզ 'ի մէնջ , դարձո՛ աչս հայրենիս .
 Եւ ջերաջերմ թէ 'ի մերոցս այսքան ցնդեալ ծուխ արտասուաց ,
 Եւ կենսախառն 'ի ճապաղեաց վերադարձեալ արեան ոգի ,
 Եւ քան ըզմահ դառն երաշխեպք սիրելազիրկ որբոց անձանց ,
 Թէ հրացնցող այսքան տարափք երկնասլացիկք բաղխին ընդ քեզ՝
 Թ) Թափեսցին շարք շանթաշարժք յաստուածեան քոց արտեանանց .
 Ղարանակալն յաւիտենից խաղաղութիւն դարձցի առ զահ ,
 Ղարձցի հեղն այն , դարձցի հաստիչ , դարձցի սիրուն խաղաղութիւն ,
 Որ սասանեալ յաստուածամուխ իսկ սրօքէիցդ 'ի սրսկապան՝
 Ղաստ 'ի կըթոտ մատըռուակէ արդարութեանդ ահաւորի
 () Բաժակն արեան , զբաժակ լալեաց , զբաժակ խանձից և սրածութեանց
 () որ 'ի հերուն քամեաց յերկրէ վճիռ անաչառ կամ պարտք մեղաց :
 Եւ այժմ , էհէ , դարձեալ 'ի նոյն ծրփան տագնապս աշխարհածով
 Ըգգք և ազնիւք՝ չարեաց հաղորդք , խէթք յապագայց , ելիցն անգէտք ,
 Կէսք սանձակոծք և այլք անսանձ , վարիչք վարեալք յապշոպ 'ի նոյն .
 Ոչ զրկեալն հանդարտէ , ոչ զրկահար խնդայ 'նդ հարուած ,
 Լմաչէ յաղթական , փառաւորի յաղթեալն յամօթ ,
 Կապեալն ոստուցանէ , և որ կապէն՝ զինք վարակէ .
 Որ տապալէն ու որ տապալին դէմ ընդդէմ կան ըզդողանի .
 Լնհասիցըն ձեռնարձակք և առձեռնեայց ապախտաւորք .
 Լըդարութեան կէտն 'ի միջի կայ , երկփեղկեալ աղջ մահացուաց
 Հանդիպածիքք արձանացեալք տարաճրգեն միշտ անդրագոյնս .
 Յամառութիւնք բազմակարծիք անհաշտ ոսոխք բաղխին յիրար .
 Շարժեն սուսեր մանկունք խաղոյ , թզկաց գոռան արք կորովիք .
 Լերկ մանկութիւն ուրացաւ զԼ՝ թենաս , զէն ընդ ուս եբեր .
 Հողնեցան դէմք ամօթեալ , հրազինեցան աղու աչկունք .
 Ղրգասուն ելք կենաց 'ի իրիստ խոնարհեցան մուտս օրհասին .
 Բոմբիւնք մահու , շոփնդն արհաւրաց վերապատուեալ եղև քան զլոյս .
 Հարաւ յանօթս որոտահուրս աստուածաբարձ զէնն հաշտարար .
 Ղձձեցար և դու հարսնեակ նազելի ո՛վ քրիստոսեան կրօնք :
 () այն տեսեալ ըզգօնութեան՝ արտասուեաց ելիք զերկիր ,
 Լըտասուեաց հրեշտակն երկրի շարժեաց գըլուխ կայծակնավարս :
 Ի խուճապել հանճարեղին իմաստնանալ կարծեաց պանդոյր .
 Լարեցան լեզուք , լըցան աղեղնաբանք 'ի հրապարակս ,
 Շատխօսութեամբ և սըտութեամբ ողողեցին առ հասարակ .
 Լմենայն ոք քաղաքագէտ , իւրաքանչիւր ոք հնարիմաց .
 Բանասէր երիկեան յեց 'ի ջախջախ փետուրն յողայ
 Թ) ող թէ զքաղաք՝ փոքրր միւս ևս երկնավարել քեզ ուսուցէ .
 Յասպարէզ կարդայ՝ որ զոտն յոտանէ այն ինչ չէր փոխեալ .
 Լեւեցեն ծերք , զի համբակաց իսելսպատակ զեղաւ հանճար .
 Լմաչեսցէ իմաստուն , լուռ լիցի արդար , զի նոր է դարս ,
 Եւ նոր տեսին լոյս , նոր աստեղս՝ որոց 'ի վիհս երթային ոտք .
 Լգատ է մարդ , հայթ հայթ եսցուր զազատութիւն , և որպիսի . . .

Լայս են , ո՛վ տէր , այս համախուով երկրի՝ տաճնապէք ջերմնասարսուռ
 Բնդ որ հարկ հասարակաց զընես հորդել զանձնիւր շաւիղ ,
 Յանմատուցից մինչ 'ի բարձանց դու ծիծաղիս աստուածութեանդ ,
 Օ կամահաճոյ և զաղփաղփուն իրակութեամբք մահկանացուաց ,
 Ը անցասումնն դիտելով և ըզժրպիրհան աղակատանս :
 Ս ան որոյ հանուրց այս թերթ 'ի քէն ժրտի խաղաղութիւն
 Յնորակոծ մըտաց , յահուր սրտից , բազկաց մահազինաց :
 Խ կ եթէ , աւանդ երկրիս , պարտք անհրաժեշտք կարդան ըզվրէժ ,
 Խ տակաւին սուր վերացեալ է քո 'ի խրատ որդւոց մարդկան ,
 Լ 'րկ աղէ արկ (և իշխէ՞ զայս աղերսարկու մաղթել բերան) ,
 Լ 'րկ ըզսուրն արդարութեան 'ի նժար դասուն անօրինի ,
 Խորասցի կրունկն արինաճեմ՝ յանպարտահոսն իւր ճապաղուջ ,
 Համբուրեացէ բերան գոռոզ զոտն անմեղին զոր ընկիճեաց .
 Հերքեսցի հողահանուն մարդակոտոր եղջիւր կոկոզ ,
 Հեշտահողով անիւ բաղդին ընդոստուսցէ և ճմլեսցի : . . .
 Խ 'ի քթթել քում փայլական համառօտեալ ըզվրէժ երկրի՝
 Լրճակեսցես յուխտիդ բազնէ յերկնակարկառն Լայրարատայ
 Օ կամարն յաշտից 'ի կայծս արեան և յարտասուս շափիւղափայլ .
 Խ լեսցեն հրացանութիւնք լեսցեն խօլիցս ամբոխութիւնք ,
 Խ լընդհանուրըս ցանկալին ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՁԱՅՆ ՀԵՉԵՍՑԻ :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Ընդէն յապուէ գաստիարակութիւն :

ԻՐԱՒԱԹԱ զրուցուած է թէ Բա-
 րերարութիւնն մեծագին է , բայց յար-
 մար ատեն կամ կերպով եղածն՝ կրկին
 կամ անգին բարերարութիւն է . այս-
 պէս և դաստիարակութիւնն՝ որ ժո-
 ղովորդեան ամենէն մեծ և հարկաւոր
 բարիքն է , այն ատեն աւելի մեծ օ-
 գուտ կ'ընէ՝ երբ ընդունողին պիտոյիցն
 պատշաճ և բնաւորութեանն յարմար
 կերպով տրուի : Դաստիարակութեան
 վախճանն ամէն ազգի համար ալ նոյն
 է , բայց վախճանին հասնելու միջոց-
 ներն կրնայ տարբեր ըլլալ , և պէտք է
 որ ըլլայ . վասն զի ամէն ազգ նոյն մար-
 մին և նոյն արիւնն ունի , բայց ոչ նոյն
 խառնուածք և նոյն բնաւորութիւն .
 և ինչպէս բնական ախորժակք զանա-
 զան են մարդկանց մէջ , զանազան են
 նաև բարոյականք . և ինչպէս որ ըստ

ախորժակաց կը զանազանենք բնական
 կենաց սնունդն , այսպէս ալ զանազա-
 նելու է բարոյական կենաց սնունդն որ է
 դաստիարակութիւն կամ կրթութիւն .
 միթէ հացին նիւթն ալիւր ու ջուր և
 աղ չէ՞ . բայց որչափ տեսակ շաղուած
 հաց կայ զանազան քմնց համար . այս-
 պէս դաստիարակութեան նիւթն ալ
 միշտ ուղիղ բարոյականն պիտի ըլլայ ,
 բայց կանոնքն զանազան ըստ ընդունա-
 կութեան կրթողաց : Եւ որ այս-
 պէս չըլլայ՝ կամ քիչ օգուտ կ'ընէ դաս-
 տիարակութիւնն կամ ոչինչ , կրնայ
 նաև վնաս ընել . ինչպէս որ նոյն դեղն
 զանազան հիւանդաց , նաև նոյն հիւան-
 դութիւնն ունեցողաց՝ բայց զանազան
 բնաւորութեան և կազմուածքի տէր ե-
 ղողաց տալու ըլլանք , կրնայ զմէկն ա-
 ռողջացընել , մէկուն ամենևին օգուտ
 չընել , զմէկան ալ աւելի հիւանդացը-
 նել : Լայս բանս չգիտեմքն է շատ ան-
 գամ դաստիարակութեան անպտուղ
 ըլլալն և չտարածուիլն :

Երկայն ատենէ կրթութեան սով
 քաշած ազգ մը՝ իրաւ է որ առջի բե-
 րան ո՛ր և է սիրտ բռնելու բանով գոհ